

Հաստատում եմ

Տ. Պետրոսյանի անվան շախմատի տան

Տնօրեն՝

Հ. Թավադյան

2016 թ.

*Տ. Պետրոսյանի անվան շախմատի տան պատանիների*

*առաջնության եզրափակիչ մրցաշարի*

## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Մրցաշարն կանցկացվի դեկտեմբերի 6-15-ը:

Մրցաշարը կանցկացվի 4 տարիքային խմբերով՝ մինչև 8,10,12: Մասնակցում են երկրորդ, առաջին, վարկանիշ ունեցող, ինչպես նաև 1/2 եզրափակիչ մրցաշարից իրավունք ստացած շախմատիստները:

Մինչև 16 տարեկանների խմբում իրավունք ունեն մասնակցելու վարկանիշ ունեցող և առաջին կարգային ( տեղերը սահմանափակ են) շախմատիստները:

Մրցաշարն անց է կացվում ՖԻԴԵ-ի շախմատային օրենսգրքի համաձայն, շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով:

Ժամակարգը՝ 90-ական րոպե յուրաքանչյուր մասնակցին մինչև պարտիայի ավարտը, յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով:

Հավասար միավորներ վաստակելու դեպքում տեղերը կորոշվեն ըստ.

ա/ հատված Բուխհոլց –I գործակցի

բ/ գումարային Բուխհոլցի

գ/ սև գույնի ֆիգուրաներով խաղացած պարտիաների առավելագույն թվի:

Խաղասկզբի համար սահմանված ժամից 15 րոպեից ավելի ուշացած մասնակցին գրանցվում է պարտություն: